# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

<< 02 >> 09 2011թ. N: 285-Ա ք.Գյումրի

<<ԳՅՈՒՄՐՈՒ Վ. ԱԲԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆԿԱԽ ԳՆԱՀԱՏՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 3-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.<<Գյումրու Վ. Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությանը թույլատրել ընկերությանը պատկանող ԳԱԶ-32214 մակնիշի շտապօգնության մեքենայի շուկայական արժեքը սահմանելու համար օգտվել անկախ գնահատողի ծառայությունից:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին:

Ա. Գիգիրյան

Իսկականի հետ ճիշտ է